ՀԱՂՈՒՐԴԻՈՒՍՆԵՐ

Տ. ՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՇԱՔԱՐՅԱՆ

ԽՈՏԻՆ[1]

Բեսարաբիայի նահանգի Խոտին քաղաքում հայերի մասին գրականության մեջ առաջին հիշատակությունները վերաբերում են XIV դարին, իսկ 1480 թվականին արդեն խոսվում է հայկական եկեղեցու գոյության մասին: Հայերը Հոթինում XVI - XVII դարերում ենթարկվել են հալածանքների՝ նրանց փորձել են կաթոլիկացնել: 1551 թ. մոլդավական իշխան Շտեֆան Ռարեշը քանդել է փվել Հոթինի հայկական եկեղեցին, որը շուտով վերակառուցվել է: Ըստ որոշ աղբյուրների՝ XVII դարի կեսերին Հոթինում կար գործող հայկական եկեղեցի[2]: Ըստ ակադեմիկոս Ա. Թորամանյանի ուսումնասիրության՝ թուրք սուլթան Սելիմը 1801 թ. կարգադրում է քաղաքի ռազմական պարետին հայերին թույլ տալ հրդեհից ոչնչացված հայկական եկեղեցու փոխարեն կառուցել նոր եկեղեցի[3]: Սակայն Հայաստանի ազգային արխիվում հայտնաբերվել է Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի վիճակավոր փոխանորդ Սարգիս վարդապետ Տեր - Գասպարյանի՝ 1872 թ. Ս. Էջմիածնի սինոդին հղած զեկուցագիրը, որի մեջ փոխանորդը, խոսելով Հոթինի հայկական եկեղեցու խարխլված դրության մասին, նշում է, որ եկեղեցու շինությունը շատ հին է, «քանզի ի նախկին ժամանակս եղեալ է մզկիթ փաճկաց եւ ապա 70 կամ 80 ամօք յառաջագոյն փոխարկեալ ի սուրբ եկեղեցի»[4]:Համենայն դեպս ակներեւ է, որ XIX դարի սկզբներից Հոթինում գործել է Հայ Առաքելական Եկեղեցի: Հոթինի հայոց եկեղեցու մասին հաջորդ հիշատակությանը հանդիպում ենք 1839 թ. կազմված Բեսարաբիայի թեմի հայ քահանաների ցուցակում, որտեղ նշված է, որ Մարտիրոս քահանա Հարությունյանը ծառայում է Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցում 1825 թվականից[5]:

Հոթինի հայկական համայնքը մեծ չի եղել, եւ նրա թիվը երբեք չի հատել 300-ի սահմանը: Այսպես՝ 1809 թ. այնտեղ բնակվել է 16 հայ ընտանիք: Մինաս վարդապետ Բժշկյանը, իր աշխատության մեջ խոսելով Հոթինի մասին, գրում է. «Յառաջագոյն անուանի էր եւ բազմամարդ, եւ կային 17 հազար բնակիչք, եւ ոչ սակաւ հայք. այլ այժմ[6] հազիւ մնացեալ են 20 տունք, որք ունին եկեղեցի յանուն սբ. Աստուածածնին[7]»[8]: 1840-ին նրանց թիվը հասել է

1 Այժմ՝ քաղաք Ուկրաինայում: Հայկական աղբյուրներում՝ Հօթին –(այսուհետ՝ Հոթին):

2 **Թորամանյան Ա.,** Մոլդավիայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1989, էջ48:

3 Անդ:

4 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.6170, թթ.1-2:

5 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.509, թ.289:

6 Խոսքը վերաբերում է 1820-ական թթ.:

7 Բժշկյանը հավանաբար շփոթել է Հոթինի հայոց եկեղեցու անունը, քանի որ հերագա բոլոր արխիվային վավերագրերում եկեղեցին հիշտակվում է իբրեւ Ս. Հովհաննես:

8 **Մ. Բժշկեան,** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սիրելոց ի

126 հոգու, 1855 թ.՝ 196[9], 1872-ին՝ 277[10], 1896-ին՝ 12 (5 արական, 7 իգական)[11], 1905-ին՝ 2, 1909 թվականին Հոթինում ոչ մի հայ չի բնակվել[12],մ 1920 թ.՝ 10 հայ[13]:

Հայտնի է, որ 1839 թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը Հոթինի հայոց եկեղեցին կողոպըտվել է: Անհայտ հանցագործները գողացել են եկեղեցական անոթներ, սպասք եւ քահանայի անձնական իրերն ու զգեստները[14]:

Հոթինի հայոց եկեղեցու պատմության մեջ փասնամյակներ շարունակ նշանակալից դեր են կատարել Լուսեղենյան ընտանիքի անդամները: Այսպես՝ 1830 թ. եկեղեցու երեցփոխան է ընտրվել 3-րդ կարգի վաճառական Հարություն Լուսեղենյանը, որն այդ պաշտոնում մնացել է մինչ իր մահը՝ 1841 թ.: Թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին, անձամբ ծանոթ լինելով Հարություն Լուսեղենյանի գործունեությանը, առաջարկում է նրա փոխարեն երեցփոխան ընտրել որդուն՝ Հովհաննես Լուսեղենյանին[15]: Երբ վերջինս ընդունում է երեցփոխանության պաշտոնը, եկեղեցու հասույթը կազմում էր ընդամենը 29 ռուբլի 38 կոպեկ: Նրա ջանքերի շնորհիվ շուտով այդ գումարը հասնում է 300 ռուբլու: Հովհաննես Լուսեղենյանը երեք անգամ վերընտրվել[16] է այդ պաշտոնում՝ վայելելով տեղի հայության վստահությունն ու համակրանքը: 1855 թ. Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցու ծխականները դիմում են Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի հայոց վիճակային կոնսիստորիային՝ խնդրելով միջնորդել բարձրագույն ատյանների առջեւ եկեղեցու երեցփոխան Հարություն Լուսեղենյանին պարգեւատրելու համար: Թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսը, ընդառաջելով ծխականների խնդրանքին, զեկուցագիր է ներկայացնում Ս. Էջմիածնի սինոդին, որում մասնավորաբար ասվում էր. «Վերոյիշեալ երեցփոխան Յովհաննէս Լուսեղէնեան իւրով յորդորանօք յաւելացուցեալ է զանազան զգեստս եկեղեցւոյ յԱրդեանց ժողովրդոց, եւ եկեղեցական պանդոկն որ ցմուտն նոյն Լուսեղէնովի Ի պաշտօն երեցփոխանութեան զտանէր ապարդիւն, նա շինեաց անտի զերիս տունս, եւ եւ վարձու որք բերէն յայնմ ժամանակէ մինչ ցարդ յամին 45 մանէթ արդիւնս, եւս եւ զտարեկան վարձս եկեղեցական կրպակաց յաւելացոյց, առ իւրաքանչիւր ամն զ50 մանէթ, նաեւ շինեաց Արդեամբ ժողովրդականաց ըստ իւրոյ հեստեւողութեան շուրջ զեկեղեցական զքարեայ պարիսպ, եւ ի սրահի այնորիկ տնկեաց զանազան մրգաւէտ ծառս, եւ զեկեղեցին վերանորոգեաց, եւ երրորդ՝ բազմայիշատակեալ երեցփոխանն այն յետ ցուցանելոյն զհարկաւոր պէտս եկեղեցւոյն յաւելացուցեալ է յԱրդեանց եկեղեցւոյն այնորիկ մինչ ցայժմ 858 մանէթ 44 եւ $^1/_2$ կոպէկ արծաթի»[17]: Սինոդն առաջնորդվելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կառավարման կանոնադ-

նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ188:

9 ՀԱԱ, ֆ.320, ց.1, գ.907, թ.90շրջ.:

10 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.6258, թ.102:

11 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.9300,թ.3:

12 ՀԱԱ, ֆ.56, ց.18, գ.738, թ.1:

13 ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.618, թ.8:

14 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.516, թ.1:

15 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3358, թ.1շրջ.:

16 1836 թ. մարտի 1-ին ընդունված Ռուսաստանի Հայաստանյաց առաքելական եկեղեցու կառավարման կանոնադրության 122 հոդվածի համաձայն՝ եկեղեցու երեսփոխանը ընտրվում էր երեք տարի ժամանակով. «Երեցփոխանն կամ եկեղեցապանն եկեղեցւոյն ընտրի եռամեայ ժամանակաւ ի պատուաւորագունիցն ի ժողովուրդս ի լրանալ երից ամացն կարէ նա ի նորոյ ընտրիլ յայս պաշտօն» (ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ.85, թ.11):

17 ՀԱԱ, ֆ.56, ց.1, 3358, թ.2:

ության 126-րդ հոդվածի պահանջով[18], միջնորդում է ներքին գործերի նախարարությանը՝ Հովհաննես Լուսեղենյանին պարգևատրելու համար: 1858 թվականի փետրվարի 21-ին նա պարգևատրվել է արծաթե մեդալով՝ Ս. Ստեփանոսավի ժապավենի վրա[19]:

1860 թ. օգոստոսի 5-ին Նոր Նախիջևանի եւ Բեսարաբիայի հայոց թեմական առաջնորդ Գաբրիել վարդապետ Այվազյանը դիմում է Ս. Էջմիածնի սինոդին, որում մի առ մի թվարկելով մինչ այդ Հոթինի Ս. Աստվածածին եկեղեցու երեցփոխական պաշտոնը վարող Հովհաննես Լուսեղենյանի վաստակը՝ ի շահ եկեղեցու՝ խնդրում է միջնորդել նրան ոսկե մեդալով պարգևատրելու համար[20]: 1864 թվականին Հ. Լուսեղենյանը պարգևատրվել է ոսկե մեդալով՝ Ս. Աննայի ժապավենի վրա[21]:

Հարկ է նշել, որ Հարություն Լուսեղենյանը «յաղագս բարեբարոյութեան եւ գերազանց հաւատարմութեան վարուց եւ բարուց իւրոյ» 1854 թ. ապրիլի 19-ին ընտրվել[22], իսկ 1857 թ. հունիսի 11-ին վերընտրվել[23] է Հոթինի քաղաքագլուխ:

Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցու պատմության համար առավել նշանակալից եղան Հակոբ Հարությունի Լուսեղենյանի երեցփոխանության տարիները: Նա երեցփոխանական պաշտոնում հաստատվել է վիճակային կոնսիստորիայի 1863 թ. հունիսի 8-ի 308 հրամանով[24]:

Լուսեղենյանի պաշտոնավարումը նշանավորվեց նրանով, որ նրա անմիջական ջանքերով ու նյութական օժանդակությամբ Հոթինում կառուցվեց նոր եկեղեցի: Սկսած 1869 թվականից նա բազմիցս դիմել է թեմի հոգեւոր իշխանություններին՝ խնդրելով թույլ տալ քանդելու հին եկեղեցին եւ փոխարենը կառուցելու նորը: Թեմական առաջնորդ Գեւորգ արքեպիսկոպոսը Հոթին է գործուղում Հակոբ ավագ քահանա Սուրենյանցին, որպեսզի վերջինս տեղում պարզի, թե արդյոք հնարավոր չէ՞ եկեղեցին վերանորոգել: Վերադառնալով Հոթինից՝ Հակոբ ավագ քահանան զեկուցում է Սրբազան առաջնորդին, որ «վերանորոգութիւն եկեղեցւոյն այնորիկ անհնարին է եւ հարկ է անշուշտ քանդել, շինելով ի տեղւոջ սեղանի եկեղեցւոյն զքարեայ փոքրիկ յիշատակ ինչ»[25]: Սակայն նկարագրվող դեպքերից յոթ օր անց Գեւորգ արքեպիսկոպոսը վախճանվում[26] է, եւ եկեղեցու «գործը» մնում է անկատար:

1872 թ. հունիսի 28-ին Հակոբ Լուսեղենյանը կրկին զեկուցագիր է ներկայացնում թեմի վիճակավոր փոխանորդին, որում մասնավորաբար գրում է. «Հասարակութիւն տեղւոյս ի նկատի ունելով թէ եկեղեցին այն չկարէ մնալ այլ եւս կանգուն եւ վերանորոգութիւն նորին անհնարին ի պատճառս սաստիկ հնութեանն եւ զի վերջապէս մնալն այնպէս կիսա-

18 «Եկեղեցականն կամ երիցփոխանն որ առաւելութեամբ աճեցուցեալ է զմայր գումար եկեղեցւոյն՝ յորում է ինքն, եւ կամ կատարեալէ զայս պաշտօն զամս ինն անմիջահատ, առ կատարեալ բառականութիւն իւրումն կառավարութեան ստանայ այնու զիրաւունս, զի եղիցի առաջարկութիւն ի վարձատրութիւն նորին ըստ հասարակեալ կարգին»:

19 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3358, թթ.7:

20 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3358, թ.5:

21 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3358, թթ.21-22:

22 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3358, թ.1:

23 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.3358, թ.7:

24 ՀԱԱ, ֆ.54, ց.1, գ.401, թ.57:

25 ՀԱԱ, ֆ.56,. ց.1, գ.6170, թ.1շրջ.:

26 Գեւորգ արքեպիսկոպոս Տեր-Մկրտչյանը վախճանվել է 1871 թ.:

կործան ի միոյ կողմանէ անպատուութիւն բերէ ժողովրդոց տեղւոյն առաջի օտարաց եւ ի միւսոյ սպառնայ զվտանգաւոր կործանումն, առաջադրեցին ինձ անգամ մի եւս մատուցանել առ Ձերդ Բարձրապատուութիւն զինդիր եւ աղերսել դարձուցանել զմտադրութիւն Ձեր առ խղճալի դրութիւն եկեղեցւոյն մերոյ եւ ըստ այնմ առնել զպատշաճականն տնօրէնութիւն յաղագս ի սպառ քանդելոյ զայն, քանզի ի կարճ միջոցի ինքնին ունի կործանիլ յորմէ կարէ հետեւիլ վնաս մեծ ի պատճառս զտանելոյ նորին մերձ բնակարանաց»:[27]

Հայտնի է, որ Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցին քանդվել է եւ նրա փոխարեն կառուցվել է նորը: Մեր ձեռքի տակ եղած արխիվային փաստաթղթերի վկայությամբ 1880 թվականի գարնանը նոր եկեղեցու շինարարությունը գրեթե ավարտված էր[28]: Եկեղեցու շինարարության համար Հակոբ Լուսեղենյանը ծախսել է իր սեփական դրամից 600 ռուբլի արծաթ:

Լուսեղենյանի երեցփոխանության ընթացքում նրա ջանքերով վերանորգվեցին եկեղեցապատկան կրպակները, որոնցից ստացվող տարեկան եկամուտը հասավ մինչեւ 400 ռուբլի արծաթի:

Հոթինի հայոց եկեղեցուն մատուցած ջերմեռանդ ու հավատարիմ ծառայության համար 1884 թ. Հակոբ Լուսեղենյանը պարգեւատրվել է արծաթե մեդալով՝ Ս. Ստանիսլավի ժապավենի վրա[29]:

1855 թվականին Ս. Էջմիածնի սինոդին ներկայացված տեղեկագրի համաձայն Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցին իբրեւ անշարժ կալվածք ուներ 1 տուն եւ 13 կրպակ՝ 950 ռուբլի արժողությամբ եւ 773 ռուբլի 94 կոպեկ դրամագլուխ[30]: Եկեղեցու կալվածքները գրեթե նույնն են մնացել հետագա տարիների ընթացքում, փոփոխվել է միայն դրանցից ստացվող եկամտի չափը: XX դարի սկզբներին արտագաղթի հետեւանքով Հոթինի հայ համայնքը վերացավ: Այսպես՝ ըստ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի հայոց թեմի եկեղեցիների վերաբերյալ կազմված տեղեկագրի՝ 1902 թ. Հոթինում կար մեկ եկեղեցի եւ մեկ հայ:[31] Քաղաքում մնացած միակ հայը եկեղեցու երեցփոխան Լուսախանովն էր[32]: Փաստորեն, XX դարի սկզբներից Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցին դադարեց գործելուց, եւ եկեղեցապատկան կալվածքների շահագործման ու տնօրինման խնդիր առաջացավ: 1909 թ. հունվարի 12-ին թեմի վիճակային կոնսիստորիան նույն կոնսիստորիայի անդամ Արտակ վարդապետին գործուղում է Հոթին՝ տեղում կալվածքների դրությունը ստուգելու[33]: Ստուգումներից պարզվում է, որ երեցփոխան Լուսախանովը, չարաշահելով իր իրավունքները,[34] առանց կոնսիստորիայի գիտության ու համաձայնության եկեղեցապատկան տները վարձով է տվել մասնավոր

27 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.6170, թ.1:

28 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.7736, թ.1շրջ.:

29 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.7736, թ.3:

30 ՀԱԱ, ֆ.320, ց.1, գ.907, թ.90շրջ.:

31 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.10044, թ.202:

32 Փաստաթղթում երեցփոխանի ազգանունը գրված է Լուսախանով, սակայն կասկածից վեր է, որ նա նույն Լուսեղենյանների տոհմից է:

33 ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.738, թ.1:

34 1895 թ. օգոստոսի 10-ին կոնսիստորիան հավատարմաթուղթ էր տվել Լուսախանովի անունով, որով վերջինիս լիազորում էր եկեղեցապատկան տներն ու խանութները վարձով տալ՝ նախապես ստանալով կոնսիստորիայի համաձայնությունը (ՀԱԱ, ֆ.56, ց.18, գ.738, թ.6շրջ.):

անձանց եւ յուրացրել ստացված եկամուտները[35]: 1909 թ. օգոստոսի 24-ին Արտակ վարդապետը կոնսիստորիային է ներկայացնում ընդարձակ զեկուցագիր իր կատարած ստուգումների մասին: Սեպտեմբերի 24-ին կոնսիստորիան նամակ է առաքում Ս. Էջմիածնի սինոդին, որով, ներկայացնելով իրերի դրությունը, գրում է. «Յայսպիսի յաւեր կացութեան անհնարին է թողուլ զկալուածս, յընթացս նոյն իսկ մերձաւոր ժամանակի օտարազինք յափշտակեսցին զնոսա եւ սեպհականեսցին, ի խոյս այսպիսի հետեւանաց կոնսիստորիայս բարւոք համարէ տալ զամենայն կալուածս աճրդախօսութեամբ ունեք ի շինութիւն եւ ի շահեցողութիւն որոշեալ ժամանակաւ ըստ օրինակի կալուածոցն Քիշնեւի»[36]: 1913 թ. օգոստոսի 12-ին կոնսիստորիան նույն խնդրով կրկին դիմում է Ս. Էջմիածնի սինոդին՝ վերջինից խնդրելով Հոթինի եկեղեցապատկան կալվածքների վերաբերյալ վերջնական կարգադրությունը փութացնել «ի նկատի ունենալով, որ կապալառուներից շատերը Ամերիկա են գաղթել ու գաղթում եւ կալուածքները այս կամ այն հրէային չնչին գներով վաճառում»[37]: Ստանալով սինոդի կարգադրությունը՝ 1913 թ. դեկտեմբերի 16-ին կոնսիստորիան Հոթին է գործուղում Մարտիրոս քահանա Զատիկյանին, որը, տեղում չեղյալ հայտարարելով նախկին կապալառուների հետ Լուսախանովի կնքած պայմանագրերը, նոր կապալառուների հետ կնքում է նոր պայմանագրեր հետեւյալ պայմաններով.

«NN 681, 706, 707 եւ 772 կիսաքանդ դրութեան հասած տները տասն ռուբ. տրուած է Խայիմ Հերշ Ֆիխմանին,

N 700 տարեկան 15 ռ. Զանվիլ Վայնշտէյնին

N 701 " 15 ռ. Մէէր Լէրնէրին

N 702 " 15 ռ. Իցէկ Հերշ Ակկերմանին

N 703 " 15 ռ. Խայիմ Հերշ Ֆիխմանին

N 704 " 15 ռ. Պէսիա Հիխմանին

N 708 " 15 ռ. Խայիմ Հերշ Ֆիխմանին

N 709 " 20 ռ. Եանկէլ Մարմօրին

N 680 –Ռ " 25 ռ. Օվրիշ Շապաւսկիին

N 689 " 25 ռ. Եանկէլ Ջուկկէրմանին

N 705 " 20 ռ. Խայիմ Հերշ Ֆիխմանին

N 769 " 2 ռ. հողի վարձ Մօշկօ Խօյրիշին

N 770 " 2ռ. " " Գիթլեա Ռօյշէնբլիթ

N Ը " 2ռ. " " Ֆէլտման Լիտվակ

Ոը " 2 ռ. " " Նուտելման Զբրիժէր

N Թ " 2 ռ. " " Խայիմ Հերշ Ֆիխմանին

N 775 Ռ+ռ " 2ռ. " " Գիսիլեւիչ Ալթման

N 680 Չ երէցփոխը ծախել է ոմն Վաւիլեյ Կրաւցովի, որի ժառանգներից գնել է Դիմիտրի Կալէսնիկով

35 ՀԱԱ, ֆ.56, ց.18, գ.738, թ.5:
36 ՀԱԱ, ֆ.56, ց.18, գ.738, թ.1:
37 ՀԱԱ, ֆ.56, ց.18, գ.738, թ.23 եւ շրջ.:

N 771 փարեկան 2 բ. " " Սիմխա Իօյզէնշթրախին»[38]:

Վարձակալության պայմանագրերը կնքվում են 3 տարի ժամանակով՝ 1914 թ. ապրիլի 1-ից 1917 թ. ապրիլի 1-ը, եւ հանձնարարվում է Մարտիրոս քահանային վերահսկել, որպեսզի կապալառուները ճշտությամբ կատարեն իրենց պարտականությունները (ժամանակին վճարեն կապալավարձերը, կատարեն պայմանագրով նախատեսված վերանորոգումներ): Հետագա քաղաքական հայտնի անցուդարձերի հետեւանքով Հոթինի վերոհիշյալ կալվածքներն օտարվեցին հայոց եկեղեցուց: 1919 թ. Բեսարաբիայի հայերի պատգամավոր Հարություն Թումանյանը Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն առաքած զեկուցագրում այդ մասին է գրում[39]:

Հոթինի Ս. Հովհաննես եկեղեցուն կից երբեւէ ծխական-եկեղեցական դպրոց չի գործել:

38 ՀԱԱ, ֆ.56, ց.18, գ.738, թ.27 եւ շրջ.:
39 ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.618, թ.8: